ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի օգնական Մանանա Գալստյանի՝ Ռուսաստանի Դաշնություն (Օմսկ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Կարեն Սարգսյան և Մանանա Գալստյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնները՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետ և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի օգնական:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ռուսաստանի Դաշնություն (Օմսկ), 2022թ. հունվարի 19-ից 21-ը:

Հրավիրող կողմը՝ Ռուսաստանի Դաշնության Օմսկի նահանգապետ Ա. Բուրկով:

Գործուղման նպատակը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի և Ռուսաստանի Դաշնության Օմսկի մարզի միջև առկա համագործակցության խորացում:

Քննարկված թեմաները՝ Դեռևս 2016թ. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և Օմսկի մարզի կառավարության միջև ստորագրված առևտրատնտեսական, գիտատեխնիկական և սոցիալական ոլորտներում համագործակցության մասին համաձայնագրից բխող առկա գործընթացի, ինչպես նաև հետագա փոխգործակցության ամրապնդմանն ու խորացմանն առնչվող այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ռուսաստանի Դաշնության Օմսկի նահանգապետ Ա. Բուրկովի հրավերով ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը 2022թ. հունվարի 19-ից 21-ը այցելել է Ռուսաստանի Դաշնություն (Օմսկ): Այցի նպատակն է եղել համատեղ քննարկել ՀՀ Գեղարքունիքի մարզի և Ռուսաստանի Դաշնության Օմսկի մարզի միջև առկա համագործակցության խորացմանը վերաբերող հարցեր:

Հրավերի շրջանակներում 2022թ. հունվարի 19-ից 21-ը Ռուսաստանի Դաշնություն (Օմսկ) կատարած այցի ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանին ընդունել է Ռուսաստանի Դաշնության Օմսկի նահանգապետ Ա. Բուրկովը: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկու մարզերի միջև դեռևս 2016թ. ստորագրված առևտրատնտեսական, գիտատեխնիկական, սոցիալական և այլ ոլորտներում համագործակցության մասին համաձայնագրից բխող առկա գործընթացի, ինչպես նաև հետագա փոխգործակցության ամրապնդմանն ու խորացմանն առնչվող հարցեր:

Օմսկում ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը հանդիպում է ունեցել նաև տեղի հայ համայնքի՝ համառուսաստանյան «Ռուսաստանի հայերի միություն» հասարակական կազմակերպության Օմսկի մարզային բաժանմունքի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են վերջիններիս կողմից իրենց ծննդավայրում հնարավոր ներդրումներ կատարելու, նոր աշխատատեղեր ստեղծելու և մի շարք այլ ծրագրեր իրականացնելուն առնչվող հարցեր:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետը շրջել է Օմսկում գործող գյուղատնտեսական, սննդի վերամշակման և առողջապահության ոլորտների ձեռնարկություններ, մասնավորապես՝ «Օմսկի փորձարարական գործարան» դաշնային բյուջետային հաստատություն, «Օմսկի ագրարային հետազոտական կենտրոն» դաշնային պետական բյուջետային գիտական հաստատություն, «Մետրոմեդ» ՍՊԸ գիտաարտադրական ձեռնարկություն, «Պոլիկոն» ԲԲԸ:

Շրջայցի ընթացքում վերը նշված հաստատությունների ղեկավարների հետ քննարկվել են ՀՀ Գեղարքունիքի մարզում համատեղ ձեռնարկություններ ստեղծելուն ուղղված հնարավորությունները:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ՀՀ Գեղարքունիքի մարզպետն այցելել է Օմսկի մանկավարժական համալսարան, «Առնո Բաբաջանյանի» անվան երաժշտական դպրոց, մասնակցել դպրոցի կողմից կազմակերպված միջոցառմանը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը Օմսկի նահանգապետ Ա. Բուրկովին հրավիրել է առաջիկայում այցելել Գեղարքունիքի մարզ:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ՝

Կարեն Սարգսյան

24.01.2022թ.